



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՆԻՈՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՈՐԴ. ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՒՆԻՈՅ ԵՄԲԱԹ 19 ՕԳՈՍՏՈՍ 187 ԹԻՒ 1099

ՅՅՐԴ ՏԱՐԵՂԱՐԶ ԱՐԵՒԱՐԱՏԵԱՆ

Արտոնիկ յրազիրս առաջիկայ 1099 թիւով երեւոյնէն ինքնաբերական սկսելով կը փութայ իւր առաջին քաղաքացիական շարժումներէն յայտնել, որոնք ջերմ համակրութեամբ քաջալերելիքն զիմադրութիւնս յարատեւելու այսչափ ժամանակամիջոցի մէջ մի և նոյն փութով, միևնոյն սկզբամբ, նշանաբան ունենով իրեն ազգասիրութիւնն և ազգային պատուոյ նախանձախնդրութիւնը եւ որովհետեւ չայոց ազգը քաղաքականութենէ զուրկ միմիայն կրօնն ու լեզուն կը ճանչէ իրեն ազգայնութեան հիմն և զորութիւն, վասնորոյ ամենևին զանց քրած չեմք պաշտպանելու սկիզբէն ի վեր մինչև ցայսօր ոչին երկու բարոյական պատաւարներն ընդդէմ յարձակմանց թէ օտարաց և թէ, ցաւ է ըսել, մերազգի հակառակորդաց ոմանց. որոց մէջ նշանաւոր է մին, որ իւր յամառութեամբ ցարդ ևս կը ճգնի ճակատաբաց կռուելու մեր ազգային բուն լեզուն դէմ, և անուղղակի կերպիւ՝ որ վտանգաւոր ևս է, ազգային կրօնին դէմ զանազան մղար և գայթակղեցուցիչ հրատարակութեամբք. մերթ մերկապարտոց երևելով ի գրական հանդիսարանին, մերթ ծալեալ և մերթ աշակերտի մի կերպարանաց ներքեւ՝ այնպէս կը յարձակի ճշմարտութեան դէմ: Մեք մեր սկզբունքին մէջ անխախտ յարգելով միշտ զանձնական պատիւն ու և է հակառակորդաց, պիտի շարունակեմք գարձալ պաշտպանել մեր նախահարց կրօնը, լեզուն և ամեն ինչ որ մեզ համար սուրբ է և նուիրական, որոց աւանդապատճառք և յորս կայանայ ազգայնութեան ոգին. և կը յուսամք որ բարեպաշտ և ազգասէր բաժանորդք ևս կը քաջալերեն զմեզ և յետ այսորիկ իրենց համակրութեամբք և ձեռնառութեամբ, որոց կանխաւ մեր շնորհապարտութիւնը կը յայտնեմք:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Երէք բռնի մէջ իջնալ մեր երջանիկութիւնը:

Ճարտարութիւնն ընդհանրական լոյս պայծառ, Ժողովրդեան ճակտին վրայ փայլի վեհ, Ինքզայն արեւ ճակտին վրայ լստուռոյ: Ճարտարութիւն, այս է խորհուրդ մարդկային, Որ շարունակ խզէ ամեն զոքանք: Ճարտարութիւն աշխարհակալ է խաղաղ. Ռեկոս, Տիբեթ ճարտարութեան կրպարտին: Ո՛ր գերի ազգ, ըզբեզ կընէ սա ազատ: Ո՛ր ազատ ազգ, այսինքն կընէ ճոյակապ... Վ. Հիւսիս: Հայուն ունի էր միշտ ի Պերսիոյ, Ռուսայր իրեն աստղ նորածին, Ապագային համար փայլուն, Փոխան կըրած վշտացն անհուն... Միթէ չէ՞ Հայն բողբոջ մի հին ի յԱրեւելս, մարդկան ազգին. Միթէ չէ՞ր նա ճետ փառաւոր, Որոյ ճակատ՝ անբիծ ցայսօր: Եւրոպ կռնեց նորա յոժանիք, Դրուատեցին զան օրագիրք. Նորա պահանջք՝ չէր մի մեծ բան... Հիմ Գեօրգիէն կաց անպաշտպան... Ո՛ր ազգ քան զՀայն թափեց արիւն... Ո՛ր ազգ քան զայն կրեց զրկումն... Ո՛ր անոր չափ հաւատարիմ Մընաց ցարդ իւր վեհապետին...

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արեւելեան խնդիրն, որ 1875ին Պոսեիոյ և Հէրսելովի մէջ անշնան մէկ պատճառէ ծագեցաւ, երթալով ապստամբութեան կերպարանք առաւ, ընդարձակեցաւ, Եւրոպիոյ տէրութիւններն իրարու անցուց, վերջապէս երեք տարւոյ չափ զաշխարհ յուզեց և անբաւարիւն հեղուկութիւններէն յետոյ, խաղաղութեան կերպարանաց տակ՝ դարձաւ կրկին այնտեղուր որ ծագումն առած էր: Բայց այս անգամ թէպէտեւ միևնոյն նպատակաւ սկիզբն տուաւ ապստամբութեան, այն է ազգային ազատութիւն և անկախ իշխանութիւն ձեռք բերելու ըզձիւ, սակայն դերերն փոխուեցան. առաջին անգամուն քրիստոնէից կողմէ էր ընդդէմ մահմետականութեան, և այժմ մահմետականաց կողմէ ընդդէմ քրիստոնէութեան. թէ առաջինն և թէ երկրորդն ունին իրենց իրաւունքը, այն է, ինչպէս ըսինք՝ ազատութիւնն, այն նուիրական պարգեք, որ յերկնուստ շնորհուած է թէ առանձինն իւրաքանչիւր անհատի իւր չրջանին մէջ և թէ իւրաքանչիւր հաւաքական անհատից որոնք ազգ բաւով և միևնոյն անուանակոչութեամբ և լեզուաւ իրարմէ կը տարբորին:

Երբ Պոսեիացիք և Հէրսելովիցիք ածան որ Պերսիոյ Աւագածողովն իրենց ակնկալած ազատութեան մեծաւ չնաւ, այլ իրենց տէրք միայն փոխուեցաւ, այս անգամ քրիստոնէութիւնը մահմետականութեան հետ գրեթէ միաբան միևնոյն դատին համար գլուխ վերուցին. և արտաքին զրգութեան ևս քաջալերուած թէ և բաւական քաջութեամբ սկսան կռուիլ և դիմադրել Աստուծոյ հաւատարմական բռնաշինքէմ, այսու ամենայնիւ վերջին հասած լուրերուն նայելով՝ իրենց յուսացած տեղերէն օգնութիւն չհասնելով, աւտորիական զօրքերը առաջնորդութիւն ընդհանուր պորապետ ֆիլիպովիչի բաւական յառաջացան յիշեալ երկու եր-

կիրներուն մէջ, և մինչև Սէրայէվոյ մայրաքանդաքն հասնելով, զօրաւոր ընդդիմութենէ մի յետոյ տիրեցին անոր Օգոստոս 8—20ին: Ազատասէր ժողովուրդը, ինչպէս բնական է, ամեն զօրութեան դէմ դարձեալ իւր վերջին ճիգը թափել կ'ուզէ, տեղտեղ՝ կը դռնուին առանձին խումբեր և զինեալ քաջաբացիներ, որոնք վերջին յուսահատութեամբ՝ կը պատերազմին: Սա սոցոյգ է որ իրենց դատն որքան որ արդար է և գովելի ընդհանուր օրինաց առջև, սակայն քնատակար ևս է իրենց ազգային կենսական շահոյց. մանաւանդ որ խնդիրն այսօր ուրիշ կերպարանք առած է, իրենց երկիրը դարձեալ վեհ: Սուլթանին գերիշխանութեան տակ պիտի մնայ, մեկթաց մէջ՝ Նորին վեհափառութեան անուան պիտի կարգադրուի խուլիպէ ըսուած աղօթքը. կառավարութեան պաշտօնեայր տեղացւոյմէ պիտի կարգին, տրոց հաւաքումը և մաքսական իրաւունքը դարձեալ նոցա ձեռք պիտի լինի արդէն հաստատեալ սկզբանց համեմատ, միով բանիւ՝ բոլոր երկիրը յանուն վեհ: Ուրիշանին պիտի կառավարուի: Աստուծոյ հաւատարմական կառավարութեան դործը պիտի լինի Բարձր Դրան խորհրդակցութեամբ հարկաւոր գաւառի բարեօրոգումները մոցընել յիշեալ երկու երկիրներուն վարչական օրինաց մէջ:

Այսպէս, ահա, երաշխաւորեալ կը համարի խաղաղութիւնը, և Արեւելեան խնդիրն ևս եթէ ոչ իսպառ, գոնէ մէկ ժամանակի համար լուծուած է, կրնամք ըսել, տեսնելով միւս կողմէն ալ որ Ռուսք վերջնապէս որոշած են իրենց բանակեցրոնք ի Թեքիթաղ փոխադրել, որոյ համար մեծ պատրաստութիւններ կը լինին. այլեւ կայսերական թիկնապաշտ զօրաց գնդերը ի Ռուսաստան վերադարձնելու համար հարկաւոր միջոցներն ձեռք առնուած են:

Սոյն խաղաղական տրամադրութեանց հետեւանք կը համարին նաև Անգղիոյ որոշումն ալ Պոսեիոյն իւր նաւատորմը ետ կոչելուն և Սեր-

Ձինչ այլ Գեօրգիէն խնդրէր Հայէ, Ի՞նչ մընաց որ նա չըկրէ... Զի՞րք, կը թուծիւն կ'ուզէր անկէ, Թող այլընէք զայն բազդատէ, Երեսփոխանք դժբողոք Հայոց, Վըհաւ դառնայք ի ծառէջ, Մի՛ լըքանիք, կայ էրէք էր, Որովք փրկի շոյտ մեր երկիր, Տամբ դժ և փայլ ջիւղ զարգացման, Ուսման, Հնարից(1), Ծառաւորութեան, Ետտ բան յերի բովանդակի, Նոր Ոսկեդար մեզ կը ընէ, Քան զայլ ազգեր Արեւելեան, Որոշ վիճակ ունեցեր Հայն, Ապահովի կըսեմ թէ այս Վիճակ՝ դեռ ոչ է աւարտած, Չէ այս այն ինչ մի գաղտնիք, Խորհրդաւոր և ոչ նոր իրք, Հայն ունի դեռ երկրի վերայ Բարեբաւտիկ գործ մի, գիտնայ, Չէ այս մեզմէ խիստ շատ հեռի, Մեզ դուռն մի պիտի բացուի... Այս դուռն ըզմեզ յերջանկութիւն Առաջնորդէ պիտի խնայ, Սոյն այս դըրան հըզօր բանի՛ Միշտ կը լինի մէկ պիտանի, Կրթէ յաւէտ քո սիրտ և միտք, Քեզ կը բացուի Դուռն երջանիկ:

(1) Փոխանակ արեւստից եղաք գայտ բառ:

Թէ Արեւելք ուշ զայս ճանչցաւ, Բայց Արեւմուտք վաղ արթնցաւ, Ասով առաւ իւր զարգացում, Ասով գրտաւ իւր Մեծութիւն, Սոյն բանալեաւ նուիրական Ծագի քեզ օր երջանկութեան, Օփուէ որդւոցդ լոյս գիտութեան Հիմնեալ վերայ իմաստութեան, Ասկէ եւնեն նոր գիւցազունք, Ասով երկիրդ ըզգենու չուք, Այս քեզ բլայ լոկ առաջնորդ, Ասոր միայն Հայն է կարօտ, Անոնց՝ որոնք մեծ գուն դըրին ճանչցընել զազգ մեր՝ օտարին, Եւրոհակալիք անհուն մեզմէ, Մաղթեմք երկար կեանք ի սրտէ, Այս մի մեծ գործ էր մեզ համար, Ունի արդիւնք մէջ անհամար, Լաւ էր գործել քան կալ դանդաղ, Չայս պահանջէր մեզմէ այս դար, Հայեր, թողունք զանշարժութիւն, Սա մեզ բերաւ աղէտք անհուն... Երէք պանծայ թող Հայրենիք, Սոյն՝ լուսաւոր դարուս ոգիք, Թէ այս էրէք իր իւրեւր Առնուն քու մէջդ փայլ զօրաւոր, Յայնժամ պիտի երգեր զուարթ երգեաւ ազատ, քաղցր և հանդարտ:

վիդ իւր բանակը խաղաղութեան վիճակի վերածելը :

ԱԶԳԱՅԻՆ

Օգոստոս Աին գումարեալ ազգային երեսփոխանական ժողովոյն մէջ կրօնական խորհրդոյ մեծագոյն անդամոց համեմատական ընտրութիւնն ևս կատարուեալ է, որով կըլլանայ 14-ամբողջական թիւը. որք են՝

- Բարձր. տէր Մկրտիչ արքեպիս. Խրիմեան.
Գեր. տէր Խորէն Նար-Պէյ.
» տէր Կարապետ եպիս. Սերովբեան.
» տէր Մատթէոս իզմիրլեան.
» տէր Ամբրոսիոս ծ. վար. Ռուբինեանց.
» տէր Գարեգին ծ. վար. Թաթարեան.
» տէր Ներսէս ծ. վար. Արսլանեան.
» տէր Պողոս ծ. վար. Խօլտամեան.
» տէր Հմայեակ ծ. վար. Դիմաքսեան.
» տէր Եղնիկ ծ. վար. Ապահունի.
» տէր Իզնատիոս ծ. վար. Շիշեճեան.
Արժա. տէր Արիստակէս քահա. Մամբրէեան.
» տէր Սահակ Տ. Սարգիսեան.
» տէր Խորէն փէշիվանեան.

—Հայաստանի գաւառներէն հասած հորատաշարութեանց լուրերը գեւ. կըշարունակեն. Անցեալ շաբթու մեզ ևս նամակ մի հասաւ Կիլիկիոյ սահմաններէն, ուր Զէյթունի ազգայինք Զէրքէզաց և ուրիշ վրանաբնակ ազգաց կողմէ կրած նեղութիւններն նկարագրելով կը գանդատի մեծապէս մեր Պատրիարքարանի դէմ. և խօսքը շարայարելով կ'ըսէ. «Տէրութեան խորհուրդը ինչո՞ւ լռեց Հայոց իրաւանց մասին... ողորմելի Հայը բացատրութեան մասին սխալեցաւ արդեօք, չէ նէ յաւիտեան դատապարտուած է այս ազգը ստրուկ մնալու : Ինչո՞ւ նա կըլուէ ազգ. Պատրիարքարանը Կիլիկիոյ աշխարհի արդար պահանջը գէթ ազգաց ուշադրութեանը յանձնելու : Միթէ նա բոլորովին անարժան է աշխարհի որդւոց առջև հաւասար վանի և Մուշի Հայրենիք անուն և պատիւ ստանալու : Խրիմեան սրբազան հայրիկը, օհնեցեալ ինչ, փոխանակ վանք, Մուշը, Գուրդը, գուժը եղբրերգելու, նոցա հաւասար կամ նուազ պահ մ'առ Տաւրոսի կողովի Հայը և Կիլիկիոյ բառը պատուէր... Կիլիկիոյ աշխարհին արդար պահանջը ծրարեալ կայ Սէն—Տընի տարաբաղդ գահակալի մը ծոց :

Երիցոյ քաղաքային պարտաւորութիւնները :
(Շարունակութիւն է վերջ. Տէս գրիւ 1098) :

Երէցը շատ տեսակ տեսչական վերաբերութիւններ ունի կառավարութեան, ոստիկանութեան և իւր գործատան (եկեղեցւոյ) հետ :

Կառավարութեան հետ ունեցած վերաբերութիւնները պարզ են, պարտաւոր է նմա ինչ որ պարտաւոր է նմա քաղաքացի մի, ոչ աւելի և ոչ պակաս : Հնազանդութիւն կը պարտի արդարացի իրաց մէջ, կողմնակցութիւն չպիտի ընէ սոյն աշխարհիս մէջ կառավարութեան գլուխ եղող ոչ մի և ոչ միւս կողման և կամ ձեւերու մասին : ձեւերը կրնան փոփոխուիլ չափաւորութիւն իշխանութիւնը կը փոխին թէ անուամբ և թէ անհամբ : մարդիկ հնազանդեալ աթոռանկ կըլինին : Ասեմք բոլոր մարդ գային, անցաւոր, գիւղացիք և քսոյ ընտելեան անհատատ բաներ են : կրօնքը, խղճի վերայ Աստուծոյ յաւիտեանական կառավարութիւնը, սոյն քաղաքական փոփոխութիւններով լրցուն շրջանակէն վերադառնէ : այս շրջանակէն երբ մարդ վար կ'իջնէ կ'իջնի, նորա զօրութիւնն ևս կընուաղի : նուազ պաշտօնէս պէտք է զգուշութեամբ զատուած ընէ զինքը անկէ : Երէցն է միակ քաղաքացին որ ունի իրաւունք և պարտիք չեզոք մնալու վեճերու, ատելութեանց և կուսակցական էութեան մէջ, սրունք կարծիքներն ու մարդիկ իրարմէ կը բաժնեն, վասնզի նախ քան զամեն բան նա յաւիտեանական արքայութեան քաղաքացի է, յաղթողաց և յաղթելոց հասարակ հայրն է : սիրոյ և խաղաղութեան մարգը, որ ոչ ինչ քան զխաղաղութիւնն և

Եւրոպան բանդարդելէ զայն և չուզեր յետս դարձնել : Տաւրոսեան Հայը դարերէ անտի և այսօր իւր պատարագունքը մատուցած է հայրենի աշխարհի փրկութեան սեղանին վրայ, և բնաւ զլացած չէ իւր առ Հայրենիքն զդադած պարտիքը անձնանուիրաբար դործադրելէ : Պատրիարքարանի դառնալով կը համարձակիմ ըսել, որ միջնորդ և պատասխանատու է ամենայնի : Կիլիկիոյ մասին լուռ մնալով ուրիշ բան չպիտի տեսնէ, բայց եթէ մնացորդ Հայ որդւոց կորուստի չօշափումը, որ ուխտած է մինչև իւր միամենայ մանկան կաթիլ մի արիւնը նուիրել փրկութեան համար : . . .

Սոյն սրտաշարժ խօսքերէն յայտնի կ'իմացուի թէ Տաւրոսի լեռանց բնակիչ Հայերը ինչ մեծ և անհանդուրժելի վշտաց մէջ կը գտնուին թէ բարբարոս ազգերէն և թէ տէրութեան թուլսիրտ գործակալներէն, որք հակառակ կը վարին Բ. Դրան արդի քաղաքականութեան ոգւոյն :

Հայոց համար օտարազգիք ունանք խիստ սխալ կարծիք ունին ըսելով թէ՛ Հայք քաղաքական և զինուորական յատկութիւններէ զուրկ են : սոյն կարծիքն ունի նաև երբեմն Տրապիզոնի մէջ հիւպատոսութեան պաշտօն վարող Պ. Բաւկրավի անդղիացին, որ մատերս Հայոց մասին աննպաստ յօդուած մի հրատարակած է Թոյմիզի մէջ, և զոր լորտ Բաքուրովն հերքած է նոյն լրագրով : Մեք սոյն կարծիքը պատմաբանօրէն հաստատելու հարկ չեմք տեսնել : բաւական կը համարիմք ՄԵԱԿ լրագրի Թուսիս 7 թ. ուով թերթին մէջ կարինէն Գր. Նիկողոսեան ստորագրութեամբ գրուած նամակին պարունակութիւնը մէջ բերել, յորում պիտի տեսնուի թէ Հայոց հին քաջերէն սերած մանուկները ուստա-տաճկական պատերազմի ժամանակ զինուորական խմբերուն ախանապետ լինելով ինչպէս վառուեր է իրենց պատերազմական աշխուժ մատաղ սրտերուն մէջ, և սոյնպէս է զիրենք միախմբել ու զինուորական վարժութիւններ ընել :

Եւրոպական բարեկամ, կ'ըսէ յիշեալ նամակագիրը, կամեցաւ ինձ հետ այցելութիւն ընել հայաբնակ մի զիւր, այն էր Գան գիւղը, որոյ ետեանց կը փայլէր Եփրատ գետը : Մէկ ժամէն հասանք այնտեղ, ուսկէց դուրս խուճ մի երախայք փայտէ հրացաններով կը պարապէին զինավարժական խաղերով : Մեզ տեսածուն պէս կանգ առին ամենքն ուղիղ գծով, և երբ

զէր կարէ քարոզել աշակերտ է նորա՝ որ շօշուղ և ոչ կաթիլ մի արիւն թափել իւր անձին պաշտպանութեան համար, որ և ասաց Պետրոսին : Դիր զուրն իւր պատեանք :

Իւր գլխին (maire) հետ երէցն պէտք է յարաբերութեանց մէջ լինել աշխուժական անկախութեամբ այն բաներու մասին որոնք վերաբերութիւն ունին Աստուծոյ, հեղութեան և հաշտարարութեան հետ : չպիտի աշխատի ազգեցութիւն բանեցնել և ոչ հասարակութեան մէջ հեղինակութեան մասին վիճել : Չպիտի մտաւայ բնաւ որ իւր հեղինակութիւնը կըսկի և կը վերջանայ իւր եկեղեցւոյն շէմքին վերայ, նորա սեղանոյն ոտքը և ճշմարտութեան բեմին մէջ, կարօտելոյն և հիւանդին դրանք վերայ, հոգեվարքին անկողնոյն ստորաք. այնտեղ Աստուծոյ մարդն է, ուրիշ ամեն տեղ քան զամեն մարդիկ նուաստագոյնն և աննշարեկն է :

Իւր գործատան նկատմամբ իւր պարտիքները կ'աւանանակին կարգաւորութեան և խնայողութեան մէջ, որով շատ երէցներ իրենց թեմական վիճակին անկարգութեան ազգատութեան կրտանին : Այսպիսի մէկ աննշարեկան կրօնի մի քաղաքակրթութեան և խնայականութեան մէջ որքան աւելի կը յառաջանամք այնքան մեր տաճարներուն հարկաւոր եղած արտաքին զարդարանքները քիչ պէտք կ'ընեն :

(1) Եկեղեցեաց անխորդ զարդարք ևս սպասուց համար ինչ որ կ'ըսէ, պէտք է առնուի միայն Եւրոպական ազգաց նկատմամբ : որոնք առանձին տիրութիւններ կազմելով, պէտք չունենան քերեա եկեղեցեաց մէջ անխորդ և ճիշտ զարդարանքներու : Իսկ մեր հայկական եկեղեցեաց համար այնպէս չէ : մեր քսոյ

մտեցանք, իրենց գլխաւորի հրամանով պատիւ ըրին մեզ զինուորներու եղանակաւ : Նոցա շարժմունքը ճարպիկ էր, դէմքերնին խիստ . . . « Պէտք է ասել առ հասարակ որ զինավարժութեան սէրը այնչափ խիստ կերպով է արտա-« յայտնուած զայն Հայ մանուկների մէջ, և այն-« չափ մեծ ու կանոնաւոր խմբերով են կատար-« վում այդ խաղերը, որ շատ անգամ արժա-« նանում են զօրապետների հաւանութեան : « Պիտի լինի՞ արդեօք մի լուսադեկ օր, երբ « դոցա վարմունքը հարկաւոր դայ իրենց հայ-« րենիքին » :

« Իզմիրի ազգային երկսն, վարժարանները » :

Աշխարհիս մէջ տեսակ մը մարդիկ կան, որ իրենց վրայ մեծ համարում ունին, ինչն ահա-ւան են, իրենց տկարութիւնը կամ անկարողութիւնը ճանչալու ու խոստովանելու քաջութիւնը չունին : այնպէս կը կարծեն թէ՛ բնութիւնը ամեն ազգի յատկութիւններով ու շնորհով զարդարած է զիրենք, թէ՛ ամեն կերպ խնայողութիւն, խելք ու հանճար աւատարուղի աղբեր նման կը հոսի իրենց գլխէն, թէ՛ իրենք են միայն ամենագէտը, ամենահմուտը, ամենընտրելին, և այս պատճառաւ ուրիշ մահկանացուները իրենց աչքին իրեւ թշուշ կամ իրեւ անարգ ճանճ մի կերեկն :

Այս տեսակ մարդիկ, ինչպէս որ ըսինք, օրուան մը մէջ սկզբունք կը փոխեն շապիկ պէս, իրենց համոզման մէջ եղեցի մը չափ անդամ հաստատ չեն : ծխնելոյցի մը վրայ գտնուած թիթեղեայ աքաղաղի մը կամ դրօշի մը նման ամեն հովի առջև կը դառնան և եթէ նպատակ մը ունին, այն ալ իրենց անձնական շահուն, հանգստութեան, օգտին և բարեկաւութեան համար կը դործածեն, և իրենց շահէն ուրիշ նրախական բան չեն ճանչնար այս աշխարհի վրայ ըստ Առաքելոյն թէ՛ « որոց որովայն Աստուած իւրեանց և փառք նոցա ամօթ իւրեանց » : Ազգասիրութիւնը իրեւ գլխակ միայն կը իրեն իրենց երեսին վրայ և խօսքով կը շարունակեն : գործնականի երբ դայ ալ զիրենք հոն չեն գտնել, տեղ կը փոխեն, կարծիք կը փոխեն և կը ջանան խուսիլ որեւէ կերպիւ, որպէսզի քաջիկ մնաս մը չլրէ, հայրենասիրութիւնն ալ նոյնպէս ճերմակ թղթի վրայ անոյշ երազներ և Սպանիական դժբախտներ չինելով, և զանոնք տեսակ տեսակ գոյներով վայելեցնելով ժողովրդեան

Պաշտամանց ծառայող սոցաւոր մէջ պարզութիւն մաքրութիւն և վայելչութիւն, այս է երիտուն իւր գործատան համար պահանջածը : Շատ անգամ սեղանոյ անդարդութիւնը պատկառելի, սրտաշարժ և բանաստեղծական տեսք մի կ'ունենայ, որ մարդոց սրտին կը դուրս գալի կը շարժէ ի հակառակէն՝ քան զոր մետաքսեայ զարդերն և ոսկեղէն աշտանակները չեն կարող ընել : Ինչ են մեր ոսկեղծ զարդերն և փայլուն աւաղոյ հատիկներն՝ երկինքը տարածողին և աստղերը ցանցողին առջև : Անոց է սկիզբ միարժաթեայ կամ արծաթաւորածեալ անօթներու չափ կրնայ գլուխներ խոնարհեցնել, Բրիտանեկութեան մէջ ճերմկցած քահանային մաղերն և իրենց հարցը Աստուծոյն առջև ծունկ չդրող հաւատացելոց հաւատն և բարեպաշտութիւնն է :

Երէցն թէ իւր անձին և թէ իւրեան ծառայող կնոջ ապրուստն ու վարձը հոգալու համար և եկող գնացող կարօտաւորաց իւր դուռը բաց

որում քաղաքական ինքնուրոյն իշխանութիւն չունի, հետեւապէս բռնիք ևս ազգային գանձ մի, ազգային հանրական պարտից սահմանեալ, մեր գանձերը՝ մեր եկեղեցիներն մանաւանդ մեր վանքերն են : հետեւապէս որքան ձոխ լինին եկեղեցիք և վանքայր այնքան աւելի ձոխ են հարուստ կը համարու պարգ :

Հեղինակիս սոյն յօդուածով մէջ կան ցաւաւ որիւղ դիտողութիւններ՝ գաղղիացի կղերականաց վերաբերեալ, գործնական անփութի պահելու համար միայն բարգմանեցին, ինչպէս է, օրինակի համար, քանանայից մարմնաւոր աշխատութեանց պարայիլը, Իրենց սպասելու համար կին մարդ րոպէքնին պահել :

հաճոյքը կը գտնուեն ու կը գործեն, որպէսզի
զայն հրապարակեն և անով իրենց խաղացած
գաղափարները անոր ուշադրութիւնը և հե-
տաքրքրութիւնը հեռացնեն: Յառաջագիմու-
թիւնն ալ իրենց քմաց համաձայն կը հասկընան,
իրենց ճաշակին յարմար, և հաճելի ինչ որ
գտնեն իբրեւ զարգացման տարր և յառաջադի-
մութեան միջոց կը ներկայացնեն զայն ժողո-
ւորին և առանց կանխաւ անոր հանգամանայ
և վիճակին վրայ տեղեկութիւն ունենալու, ա-
նոր տգիտութիւնէ օգուտ քաղելով կը պարծին,
և յետոյ իրենց մօրութիւն տակէն կը խնդան զա-
նիկա խաբէրուն համար:

Այս կարգի մարդիկ խիզալ չ'ունին որ զի-
րենք տանջէ և բրածնէն համար պահանջէ, ա-
նոնք ամեն ինչ սնտուութիւն կը գաւանդեն իրենց
բարոյութիւնը կեղծէ, և քանի որ մարդու մը
բարոյականը սուտ է, անհիմն է և աւագի վրայ
գրուած, 'ի հարկէ այնպիսին ալ ևս ոչ զգա-
ցում կը կրէ, ոչ խիզճ և ոչ հաստատ համոզում:
Ասոնք օր մը Գրիստոսը կը պաշտեն իբրեւ ճշ-
մարիտ բարոյադէտ և մարդկութեան փրկիչ,
որ մը զայն կը բռնեն և վճիռէր կը հետեւին
իրեն մեծ փիլիսոփայ և մարդկութեան բարօ-
րութեան անձնուէր պաշտպան, օր մ'ալ կը-
տանեն վճիռէր կարգամարհան և զՏէքարթ
կամ զԳոմարշէ կընդունին իրենց գործոց առաջ-
նորդ, ուրիշ օր մ'ալ անկէ կը զգուցեն և զժամ-
օրը—Ռուսո կը բռնեն իրենց փաստաբան:

Ճիշտ կապիկ ախորժակ, կապիկ բնութիւն,
Սկեպտիկեանի մը դուրս թիւն, ամեն բանի վրայ
կոտորակութիւն, կը վարանին, կը չիտնին մինչև
իսկ իրենց գոյութեան վրայ: Չօգտելեաց տակ
վիճակած բանի մը էութիւն չեն տար թէ պէտե-
թէ մտօք և թէ աչք կը տեսնեն, և իրենց չա-
հախաղ բութիւնը այնքան զօրաւոր և անդիմա-
դրելի է որ, սոսկ ծայրահեղ քանքու մէջ իյ-
նալով հրապարակին վրայ խժաղու և կատակի
վիճ կը գառնան, բայց չեն առնուիր, չեն
դատաւար, հոգեբանին անգամ չէ:

Այս կարգի մարդիկ, կը կրկնենք, իրենց յան-
գիտութիւնը կը շարունակեն միշտ, տեղէ մը
փոխ լուսին, երկնքը առիթ չեն տեսներ, և
քանի որ նահատակ և մեծ մասամբ ազէտ բաղ-
նութեան մը մէջ կը գտնուին, հետեւաբար անոր
տգիտութենէ և դէշն ու աղէկը գաւառու, ո-
րովոր անկարողութենէ քաջալերուած, պատ-

դամներ կը կարգան, նոր նոր բաներ կը հնարեն
և իրենց խումբ մը շլամիտ արբանեկաց և կար-
ճամիտ հետեւորդաց մէջ իբրեւ կէս—աստուած
(Demi—Dieu) կը փառաւորին:

Այս մասին մենք եթէ ցաւելու կէտ մը ու-
նինք, այն ալ ժողովուրդն է:

Ժողովուրդը մինչև որ տգիտութիւնը և ան-
տարբերութիւնը իր կոնակէն թօթուելով, իւր
իրաւունքը և պարտքը ճանչնալու, յարգելու և
գործադրելու կարողութիւնը ամեն պարագայ-
իւք իր ձեռքը չ'առնէ, այս կարգի մարդերու
վնասակար, թուաւորիչ և քայքայիչ կարագե-
տութենէ աղատելու յոյս չունենայ ամենեւին:

Ներուի մեղ ըսել թէ՛ ժողովուրդը իր մէջ
գտնուած ամեն նուիրակն և ուրիշ բաները
անուանական կերպիւ կը մըռնէ, և սովորու-
թիւն մը կատարելու համար կընէ ինչ որ կընէ-
իր պարտաւորութեանց և իրաւանց պահանջ-
ման մասին՝ փոխանակ բողոքելու և բողոքոյ
արդիւնքը 'ի ձեռք իւր բերել ջանալու, մե-
քենայարար կը թօղու որ զինքը քչեն տանին,
և իրեն դէմ եղած ամեն անիրաւութեանց և
զրկանաց՝ գլուխը կը ծռէ և լուրջ կը պատա-
խանէ՝ առանց սակայն գիտնալու որ իրեն այս
լուրթիւնը, այս գլխակորութիւնը, միմիայն իր
ծոցը գտնուած ընտանի թշնամիները և անի-
րաւները քաջալերելու միջոց մ'է, և վերջապէս
իր զէնքովը՝ իր գլուխը կը կտրէ:

Ժողովուրդը՝ իր եկեղեցին միմիայն աղօթե-
լու տեղի մ'է կրէ, և կիրակիէ՛ կիրակի հոն
կըմնէ և իւր աղօթքը կամ ինչք Աստուծոյ
յայտնելէ հտը, կը մնին, կ'երթոյ, ուրիշ
բան չճանչնէ: Եական իրերու հետ որոնք իր
կեկեցին կը կապուեն և եթէ ճշգրտապէս գոր-
ծադրուին, անոր կոյտութիւնը կը բարձրացնեն
և նախանձի վիճակի մը կը հասցնեն, չըղա-
զիր, քահանայն լոկ քահանայ կը հասկընայ, ա-
նոր զգեստէն և պաշտօնէն կ'ակնածէ, բայց ա-
մենին շնորհակտութիւն թէ՛ արդեօք քահանայն իր
տխարին հաւատարմ է և թէ՛ իր վրայ առած
նուիրական պարտաւորութիւնները անթերի կը
կատարէ, իր պաշտօնին արժանիքը գնահատե-
լու հակադրութիւնը ունի՝ ժողովուրդը՝ չգի-
տեր դեռ թէ՛ ինքը ինչ անխտելի պահան-
ջումներ, ակնկալութիւն և իրաւունք ունի իր
քահանային վրայ, և փոխադարձաբար քահա-
նայն ինչ պարտաւորութիւններ ունի այն ժո-

ղովուրդէն վրայ, որու հովուութիւնը ստանձ-
նած է: Այս աշխարհի մէջ, պէտք է գիտնալ
որ պարտք և իրաւունք իրարու հետ համընթաց
են միշտ, այս երկուքին ճշգրիտ գործադրու-
թեամբ միայն ներդաշնակութիւն կը գոյանայ:
Այն մարդը միայն իրաւունք ունի գիտուն կոչ-
ուելու և ըստ այնմ յարգուելու, երբ կը թու-
թեան գործին մէջ իր պարտքը կատարելով
միջանակ կամ վկայագիր ստացած է: Այն քա-
հանայն միայն քահանայ կոչուելու իրաւունք
ունի, երբ իր կոչման և պաշտօնին մէջ կատա-
րած անթերի պարտաւորութիւններովը կը փայ-
լի: Այսպէս նաեւ այն ազգը կամ ժողովուրդը
միայն կրնայ անուն ստանալ, մարդկութեան
մէջ մասին օգտակար ըլլալու համար կոչու-
ման արժանի իրաւունքը ձեռք բերել, երբ յառա-
ջագիմութեան զարգացման և լուսաւորութեան
ուղիղ և արամբանական շաղկէն չեղած չէ:

Վերջապէս ժողովուրդը մը չլինար որեւիցէ ի-
րաւունք պահանջել, քանի որ իր պարտուց ճա-
նաչողութիւնը չունի և զանոնք անթերի չկա-
տարեր: Ընկերական այս երկու մեծ խնդրոց
վրայ, այնինքն իրաւանց և օլորտուց վրայ
կրնայինք թէ և հոս երկարօրէն գրել, բայց մեր
մտադրած խնդրէն չեղել չենք ուզեր, ուստի
մեր ընթերցողաց, և կեղեցւոյ և անոր պաշտօ-
նէից վրայ ունեցած անտարբերութեան և թու-
աւորութեան վրայ այսքան ինչ խօսելէ ետքը,
գտնք հիմա առաջին և ամենէ նուիրական վայ-
րին՝ այսինքն իւր գաղափարներու վրայ ունեցած
մեղադրելի անհոգութեան նկատմամբ խօսելու:
Ժողովուրդը՝ իւր գաղափարն ալ ուրաւը իւր ա-
պագայն, իւր բարեւոյս վիճակը՝ և երջանկու-
թիւնը պիտի չինուի, ամենեւին պէտք եղած
խնամքը ու հոգը չտանիր:

Իւր տղաքը գաղափար կը զրկէ սովորութեան մը
հետեւելու համար և այնպէս կը կարծէ թէ՛ քանի
որ տղայ մ'է 'ի հարկէ մինչև առնութեան հա-
սակը գաղափար երթալու պէտք ունի: Անկախ թիւր
և վնասակար գաղափար մ'է, որ գծապիւ-
րաբար մեր ժողովուրդէն մէջ օրըստօրէ կը ճարակ-
ուի, ծնողք իրենց զաւակները տունէն հեռա-
ցնելու և հոն դատաւարաւ նպատակաւ միայն
գաղափար կը զրկեն, իւր թէ՛ գաղափարը գաղափարան
կամ արգելաբան մը ըլլալով՝ ան ամենեւին գաղ-
ափարը ուրիշ մեծ նպատակ մը ունի, այնպիսի
նուիրական և սուրբ նպատակ մը, որ ուրիշ բա-

պահելու համար երկու հատուցում ունի. մին
անթուլթ ենէն՝ 750 ֆրանք. միւսը սովորութեամբ
բնական եղած, որ և պատահական կ'ըսուի:
Պատահականը քաղաքացի սնունդ մէջ բաւական
գումար կը կազմէ, ուսկէ տեղւոյն անխտելի
կը իրաւունքն ալ կը վճարէ. իսկ շատ գիւղո-
ւոց մէջ սակաւ ինչ կամ բնաւ արդիւնք չգ-
տնալու երկուսն համար. ներդրութեան երեսէն,
հաղիւ թէ չմեռնելու չափ ապրուստ մի կը-
նարէ այսու ամենայնիւ մեք գարձեալ իրեն
կընծա թէ՛ կրօնի շահուն և թէ իւր եղած
անդրոյն նկատմամբ, «Մուռքը պատահականը
նորաւորէն առէք» որ թախանձելով զձեզ կու-
տայ. մի՛ ընդունիք աղքատէն՝ որ չլինալ տա-
նա համար կ'ամաչէ, կամ իւր հարսանեաց
պարտութեան, հայրական երջանկութեան,
պալի յաղաղակարողութեան հետ խառնուած
ընկեր մոտաւորութիւնը՝ երբ իւր քսակին տա-
լէ քանի մի ստակ կը փնտրէ որ ձեր օրհնու-
թիւնները, ձեր արտօնքները, կամ ձեր ա-
ղօթքները վճարէ. մտածեցէք անգամ մի որ
թէ մեք իրարու յիշ տալու պարտաւոր եմք
կը թախանձելու կենաց հայր, աւելի իրաւամբ ձեր
կապարտաւորութիւնը ընդունել երկնային հայր. և
քաջ խմանել մի՛ տայք զձեզ հատարակաց Հօր
անդին շնորհքները ստակով տալովնիդ, և ա-
ղօթից համար դին (թարիֆա) մի որոշելովնիդ:
Բայց մեք գոյս ալ կ'ըսուիք հաւատացելոց.
Ասորք սեղանոյ համար ձեր տուած թշնակը
և վարձը անբաւական է:

Երեցն իւր մարդ մի քանի պարտաւորու-
թիւններ ևս ունի՝ որ զուտ մարդկային են, որ
իւր վերայ գրուած են իւր բարի համբաւուն
նշողութեամբ միայն և քաղաքացին և ընտա-

նեկան կենաց շնորհիւ, որ է իւր պատուական
հոտ առաքելութեան: Իւր ազգային ժամա-
տանը մէջ քաջուած, իւր եկեղեցւոյն հովանոյն
ներքեւ, խիստ քիչ անգամ պէտք է դուրս ել-
նել: Ներքի է իւրեան այդի մի, պարտիզակ մի,
ծաղիկ մի և երբեմն փոքրիկ արտ մի ունենալ
և իւր ձեռքը մշակել, ընտանի անասուն մի
սնուցանել անոնց մէջ կամ գուարճութեան և
կամօգտակարութեան համար, ինչպէս են կովը,
այծը, մաքիները, աղաւնին, երգեցիկ թռչուն-
ները, մանաւանդ շունը, տանը այն կենդանի
զարգը, աշխարհի մէջ մոռցուած՝ բայց մէկէ
մի սիրուելու պէտք ունեցող մարդոց բարեկա-
մը: Մոյն աշխատանաց, լուրթեան և խաղաղու-
թեան ապաստանարանէս խիստ քիչ անգամ
պիտի հեռանայ երեցը՝ դրացեաց խառնադոյ
ընկերութեանց մէջ երթալ խառնուելու համար
հանդիսական պատեհ՝ առիթներու մէջ միայն
պէտք է երբեմն փառաւոր հացիբրութի մի
բաժակին մէջ թախիլ իւր շրթունքը սոյն
աշխարհիս երջանիկներուն հետ: Աղքատ մար-
դը միշտ կասկածոտ ու նախանձոտ կ'ըլլայ. երբ
կըտեսնէ որ հարուստ մարդուն տանը ծխեղու-
ղէն ծուխ ելած միջոցին մարդ մի անոր տունը
կըմտնէ, ուրտեղ իւր սեղանէն աւելի պատ-
ուական սեղան մի պատրաստուած է, անմիջա-
պէս շողքորթի ու որկրամոլի անուամբ կը ըն-
դանիկա: Շատ անգամ երեցը, իւր բարեպաշ-
տական այցելութիւններէն ետ գառնալուն,
երբ հարսանեաց կամ վկայութեան պատճառաւ
աղքատին բարեկամները իւր տան մէջ հաւաք-
ուած են, կրնայ պահ մի անոնց հետ նստել սե-
հացն ուտել: Կենաց մնացեալ մասը պէտք է խո-
րանին մօտ անցընէ, և այն տղաքը մէջ, որոց

քրիստոնէական վարդապետութիւնը թոթովել
կ'ուսուցանէ, այն բարձրագոյն փիլիսոփայու-
թեան ուսմական օրինակիւրը և Աստուածային
իմաստութեան քերականը: Գրքերուն մէջ թաղ-
ուած, որոնք մենակեցին մեռեալ ընկերու-
թիւնն են, բարձր իմաստներով թարթալու
ժամանակ, երբ երեկոյեան դէմ ժամակոյն ե-
կեղեցւոյ բանակը կ'առնու. երբ գիւղի զան-
գաղը երեւոյց երբ կը զարնէ, կը տանեն ե-
րէցն որ երբեմն իւր ժամագիրքն ձեռք բեր-
նած՝ կամ իւր պարտիզակին խնձորենեաց ներ-
քեւ, կամ լեռան բարձր ու նեղ անցքերուն
մէջ ցերեկուան աշխատութեանց յոգնութիւնը
կ'առնու. քաղցը ու կրօնական օգ չնշտով մերթ-
երկնից կամ իւր ձորակին հորիզոն դիտելու,
և յամրաքայլ վար իջնելով բնութեան և նորա
հեղինակին սուրբ և զուարթալին խոկմամբը
զմայրելու:

Աւասիկ երիցու կեանքն ու զուարճութիւն-
ները. մաղերը կը ճերմկին, սկիհը վեր բռնելու
ժամանակ ձեռքերը կը գողան, բեկեալ ձայնը
ոչ ևս կը բացուի մատրան մէջ, բայց իւր ժողո-
վրոց սրտին մէջ կը հնչէ տակաւին. կըմեռնի
նա, քար մի առանց անուան ցոյց կուտայ նորա
գերեզմանին տեղը, իւր եկեղեցւոյն մօտ: Ա-
ւասիկ սահած կեանք մի. աւասիկ յաւիտեանս
մոռացեալ մարդ մի. բայց այս մարդս յաւի-
տեանականութեան մէջ գնաց հանդիւնու, ուր
կանխաւ իսկ կ'ապրէ իւր հոգին, և ըբաւ այս
աշխարհիս մէջ ինչ բարիք որ ընել պէտք էր:
Շարունակեց նա անմահ վարդապետութիւն մի.
օղակ մի եղաւ այն անհուն շղթային հաւատոյ
և առաքելութեան, և թողուլ ապագայ ծնելիք
սերնդոց հաւատ մի, օրէնք մի և Աստուած մի:

ՔԱՆՈՔԱՆ ԼՈՒՐԻՔ

Զմիռնիա, 49 Օգոստոս :

Ներքո հետ չբաղդատուիր և անհամեմատական է : Մարդ իւր մօրը արդանդէն անբան կը ընի, և չի կրնայ իւր սիրտը ինչ տարիքը որ և է լինածքէ և կրթութենէ զուրկ մնայ, սոքայ կը մնայ, կոշտ կրմեծնայ և իւր աշխատութիւնը ու սրտի կոշտութիւնը այնպիսի շարունակեց կը մղեն զինքը, որ օր մը ընկերականութեան արատ կ'ըլլայ, և անոր մէջէն կ'արտաքսուի ու կը պատժուի : Այս յոռի վիճակէն մարդս ազատելու և զայն իր կոշտ արժանի էակ մը ընելու համար, գարոյցը հիմնուած է, և տղայք հոն կը յաճախեն ոչ թէ ուրիշ բանի, այլ կրթութեան, բարոյութիւն ունեւորելու, բարին ու շարք ուրիշներու, և ընկերութեան պատիւ բերող ու մարդոց արժանիքը բարձրացնելու կարողանալու համար : Ուստի ծնողք՝ ամենէն աւելի պէտք են հոգածութիւն ունենալ, հոն՝ ուրտեղ իրենց իրոյ և խանդավառանաց առարկայ զաւակները օր մը ազդին պատուոյն, պատմութեան և կրօնին շուք և փառք արտադրելու հարազատ մարդիկ պիտի ըլլան : Ծնողք պէտք է երկնային այս մասին փոքրիկ անհոգութիւն մը իսկ ընելէ, թուլասիրտ վարուելէ : Վասնզի ծնողք պէտք է գիտնան որ այս աշխարհի մէջ, դպրոցներու վրայ անհոգութիւն և թուլամորթութիւն ընելէ մեծ և դատապարտելի յանցանք մը չկրնար ըլլալ, և այս յանցանքը իրենց հետ մինչև գերեզման կ'ընկերանայ և գերեզմանէն անդին իսկ արձագանք կուտայ : Դպրոցներու վրայ հոգածութիւն և Արագոսի պէս հսկողութիւն ընելու ընդունակութիւն ունենցող, և իր այս պարտաւորութիւնը ճանաչող ժողովրդի մը համար, ամենէն նախնական գործը պիտի ըլլայ իր դպրոցներու ներքին ընթացքին և դրութեան վրայ տեղեակ ըլլալ, վարժապետներու յաջողակութիւնը և օրինաւորութիւնը վնասել, իր տղաց զարգացման և ուսանողութեան աստիճանը չափել և տեսնել թէ՛ իրօք դպրոցի մը պահանջած դրութեան համեմատ կըստովին ինչ որ օգտակար է, գեղեցիկ է և մարդավայելուչ : Դպրոցի մը նոյնպէս էական և նախնական բանն է, կրօնի ուսումը, պէտք է նորուստ աշակերտաց՝ ջուրի պէս թափանցիկ, նուրբ և ամեն պատկերի օրինակը ստանդ սիրտը հիմնական և պաշտելի երկրպագութիւնները աւագի վրայ չմնան և մեղմ հովի մը չբանդուին : Ասոր համար կրօնի ուսումը մենք նախնական բան կընդունինք վարժարանաց մէջ և ինչպէս որ օտարազգի վարժարանաց մէջ «սկիզբն իմաստութեան» երկրպագութեան օրինակը սկիզբն է քանդակներու մէջ աւանդած և կախուած է, նոյնը կը փափաքենք մեր դպրոցներու մէջ ալ տեսնել : Այս Աստուածային պատգամը պէտք է որ մեր վարժարաններու մէջ ալ նախագաւառի, իշխէ և ազդէ գեղարվեստի մասնակցութիւնը, այս պատգամին ազդեցութեան ներքին մեծնան, իրենց սրտին մէջ երկրպագ և պատկառանք մը ունենան առ բնութիւնն և առ Աստուած, և այնպիսի կրթութիւն մը տանեն որ խղճի տէր ըլլան, և ինչ որ ընեն թէ՛ բարի և թէ՛ չար՝ իրենց խղճին առջև պատասխանատու մնան միշտ : Բայց լուսաւոր, հասուն և զգայուն խղճի տէր ըլլալու համար, նորուստ աշակերտք ճամբարի և օրինաւոր կրթութեան կրկնօրինակէն կրթութիւնը, սուտ կրթութիւնը ամենին չկրթուելէ գէշ է, և մարդուս խղճը կոյր, սիրտը անզգայ և հոգին մեղկ կը թողու, և այս պիտի զայն թշուառ, ապիկար և թափառական էակ մը կը դարձնէ : Մամուրեանի օրով մեր դպրոցները այս սուտ կրթութեան աղէտալի հետեւանքները տուած են, և դպրոցներու վիճակը արտասուելի վիճակի մը հասուցած : Եթէ աշխարհիս վրայ գտնուած դպրոցները՝ Պ. Մամուրեանի եղծեալ (desorganise) դրութեամբ կառավարուէին, աշխարհս կերպարանափոխ կըլլար մինչև հիմա, մարդիկ անկեղծ, անբարական, անկրօն, անօրէն, անպիտան և աննպատակ էակներ կըլլային, և միմիայն կենդանիի պէս նիւթական կեանք մը կը վարէին :

Թ. ԲԱՔԷԼԵԱՆ
(Մնացորդն յաջորդ բնով) :

Նորին վեհափառութեան Ապտիւլ Համիտ կայսեր գահն ելնելուն բարեպատեհ առթիւ այսօր քաղաքիս կառավարութեան պալատին մէջ շնորհաւորութեան եկողաց ընդունելութիւն հանդէսը կատարեցաւ : Երեկոյն ևս թէ պալատան մէջ և թէ պաշտօնական տեղերը լուսավարութիւն պիտի լինի :

—Այսօրն առաւել մէջ աւագակաց նոր խումբ մի երեւան ելնելուն, վսեմ վալիին հրամանաւ անցեալ կիրակէ գունդ մի զապիթիէից խրկուեցաւ հրամանատարութեմ հազարապետին :

—Նոյն գիշերը հրդեհ պատահելով Ալի փաշայ Մէյրաանը կոշուած թաղը 22 խանութի չափ հոյ ճարակ եղան :

—Վսեմ Նուպար փաշան, որոյ յեղիպտոս դարձը անցեալ թուով ծանուցինք, կ'իմանամք թէ՛ պաշտօնէից խորհրդոյ նախագահ անուանեցին : Ի. Պ. Վիլան ևս ելնելու նախարար : Կըյաւելուն ըսել թէ, բարձրա խալիվ Օգոստոս 12—24ին իւր ներկայութեան ընդունելով զՊ. Վիլան, առաց է թէ՛ տրամադիր է քաղաքական տեսչութեան մէջ իւր ի դործ դրած թերութիւնները ի բաց թողուլ և նոր դրութիւն մի հաստատել, և ընդունել միանգամայն իւր հիմնական վերանորոգութիւն՝ նախարարական անկախութիւնը : Յիշատակութեան արժանի է և մեծ նշանակութիւն ունի եգիպտոսի ելմտական վիճակի բարւոքման համար խալիվին այն վեհաճանաչման գործը, այն է իւր բոլոր անշարժ կալուածաց եկամուտը յատկացնել տէրութեան պարտուց բացը դնելու և ասոր համար մասնաւոր անտեսական խորհուրդ մի պիտի կազմուի, որ պիտի տնտեսէ կալուածները և ըստ հարկին ձեռքէ հանէ կամ գրաւի դնէ և այլն :

—Լրագրաց մէջ կը կարդանք թէ, Բ. Դուռը 5 միլիոն լիւայի փոխառութիւն պիտի ընէ Անգլիոյ երաշխաւորութեամբ, և սոյն գումարը պիտի դործածուի իւր գրամագլուխ ֆոքը Ասիոյ եկամտից կարգադրութեան համար, անգլիական տեսչութեան մի ներքին : Այս լուրը մեզ հաւանական չեւերի նկատմամբ պարագայից :

Եգիպտոսի խալիվութեան տարեկան պիւտճէն հաւասարակշռութեան մէջ հաստատուն պահելու համար օտարազգի անդամներէ կազմեալ յանձնաժողովին ըրած քննութեանց արդիւնքն ընդունած է փոխարքայն, կ'ըսէ հեռագիրը : Որ և է տուրք չափի սահմանուի առանց օրէնքի մի դրութեան և առանց կանխաւ վիճարանութեան և քաւարկութեան ենթարկելու տուրքը պիտի հաւաքուի թէ բնիկներէն և թէ օտարականներէ : Եւ որոյ վերաբերեալ գատերը տեսնելու համար յատուկ դատական խորհուրդ մի պիտի կազմուի : Հոգային տուրքերը նորէն աչքէ պիտի անցնուին : Զլի ծառայութիւնը պիտի ջնջուի : զինուորական ծառայութիւնն ալ բարեկարգի : յատուկ պահեստի գումար մի ևս պիտի սահմանուի : Ներքին հարկութիւնը նուազ եղած տարին անկէ յառաջ գալիք բացը դնելու համար :

—Այլ—Ստեֆանոյ եղած ռուսական բանակը ընդ հրամանատարութեամբ Դոգլլայէն զօրապետի, ամուսն 5ին ճանապարհ ելնելու առթիւ, զինուորական հանդէս մի ցոյց տուաւ համանուն դաշտին վրայ : Բոլոր բանակը թէ հետեակ թէ հեծեալ և թէ թնդանօթածիդ, 81,280 զօրաց մէ բաղկացեալ էր : Սոյն մեծ հանդիսին զօր լրագիրք մանրամասնաբար կը նկարագրեն, ներկայ դատաւեցաւ Մուխթար փաշան, ճէվապ—Պէյ Պէքր փաշայի սպայակոյտի գլուխ : Հասան Պէյ Ֆուատ փաշայի սպայակոյտի գլուխ : Պրնտ հազարապետ և այլք : Օսման փաշայ տկարութեմ պատճառաւ չկրցաւ առաջնիկայ լինել : Հանդէսէն յետոյ Դոգլլայէն զօրապետը մեծ ու փառաւոր նախաճաշ մի տուաւ Այիմամայի լեռնադաշտակի վերայ 300 զինուորական հրաւիրելոց : Սոյն բանակին համար կ'ըսուի թէ ի վառնա պիտի երթայ, որ արդէն սկսուած է պարպուիլ և Ռուսաց յանձնուիլ, նոյնպէս և Շուսի առկէ մի քանի շարտի յառաջ յանձնուեցաւ ռուս :

սական կառավարութեան ձեռքը :
—Ղազի Մուխթար փաշայ շրեքաբէի օրի կրետէ մեկնելու համար ճանապարհ եղած է կըսուի :

—Անգլիոյ խորհրդարանը իւր նիստերը փակեց վեհ. Թագուհւոյն մէկ գահախօսութեամբ : Նոյեմբեր 2ին (Ն. Տ.) կրկին պիտի բացուի :

—Քողան օղլու Ահմէտ փաշայի համար կը հաստատեն թէ իւր բնակութիւնը ի Ղանիա հաստատելու համար թողնուած ընդունելով Բ. Դուռնէն, ճանապարհին փախուստ տալով՝ կ'երթայ կապաւտանի դարձեալ իւր առջի որջը և ապստամբութեան գործակի բանակով բաւական մարդիկ իւր գլուխը կը հաւաքէ : Կառավարութիւնն իմանալով զայն, 4 վաշտ կանոնաւոր զօրք կը ղրկէ նորա դէմ, որոնք ամուսն 15ին դէպ ի խնկնաւորուն ճանապարհ եղան :

—Հելլենական խնդիրը գեռ չլուծուեցաւ : Բարձր Սովիէթ փաշայ ծանուցագիր մի ուղղեց Եւրոպական տէրութեանց ի պատասխան այն յիշատակագրին՝ զոր Հելլենաց երեսփոխան Տէլիեանի խօսեցաւ : յատենի Աւագածողովոյն : Սոյն ծանուցագրին մէջ՝ Նորին Բարձրութիւնը բաւական իրաւունքներ մէջ կը բերէ հերքելու յոյն երեսփոխանին առաջարկութիւնները : Բայց գեռ յայտնի չէ թէ յիշեալ ծանուցագիրն ինչ ընդունելութիւն գտաւ տէրութեանց քով : Կըյաւելուն որ դարձեալ գեսարանական միջոցաւ երկու պետութեանց մէջ համաձայնութիւն մի գոյացնելու պիտի աշխատուի : Եւ արդէն Գաղղիոյ և Իտալիոյ դահլիճը տրամադիր կ'երևին իրենց միջնորդութիւնն ի դործ դնելու :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Մեր անցեալ թիւէն յետոյ գիշերը գրեթէ միևնոյն մնացին : Եղած ծախսն են ընդամենը 293 կողով՝ հետեւեալ գիշերով : Դարահարաւ 129-Գրքաղած և Պողատիճ 131—136 : հասարակ 126 Ռաշալ 129—130 : 2090 չէք լըբընթը ծախուեցաւ 102—103 գահ : չէքին :

Պատրաստի կան չուկայի մէջ 2446 կողով : Թուգ. Երկուշարթի օրէն մինչև ցայսօր 1530 բեռ հասան, և ծախուեցան 120—140—150 գահեկանի ըստ տեսակին :

ԳԵՆՈՒՅՈՒՄ

English Commercial School

Ի փողոցն Բանտէրօլլու կոչեցեալ թիւ 1 :

Դպրոցին տեղափոխութեանը պատճառաւ աշակերտաց ընդունելութիւնը տեղի պիտի ունենայ երկուշարթի օր, 4—16 Սեպտեմբերի :

W. C. Barkshire.

Վ. Զ. Պէրքշիր :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՍԱՐԱՅ

ԳՈՐԾ ՍՈՒԵՏՈՒՆ

Թարգմանեաց Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան Բ. Ե. վերջին հատորն ես իմ միջ Տեպեան եղբարց տպարանէն ի լոյս բնծայուելով կը ծախուի ի Կ. Պոլիս Ս. Ղուկասեանի գրատունը Ե. ուրիշ գրքավաճառաց քով :

Դիւն 1 Ֆրանք 25 սանթիմ :

Société des quais de Smyrne.

Քաղաքիս քարափանց (քէի) ընկերութիւնը պատիւ ունի աղաչելու զՊ. Նաւապետները որ գոնէ 400 մեդր ծովեղբերէն հեռու խաւարին իրենց նաւերը հարաւային քարափային դէպ ի արեւմտեան և հարաւային կողմը : Ըստորում քարակոյտին քովերը ծովուն տակ աշխատողներ ըլլալուն, կրնայ ըլլալ լոյս մեծ խաւար : Ընկերուն իրենց վնաս մի հասնի :

Զմիռնիա, 14—25 Յուլիս 1873 :

Խմբագիր—տէր լրագրոց,

Գ. Լ. Գ. Պալապալեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԿԱԼՈՒՍՈՑ ԱՐԱՐԱՆՆԵՐ